Տեղեկատու թիվ 01 (հունվար 2022թ.)
Newsletter N 01

Հայ դատի Կենտրոնական Խորհուրդ

ՀՅԴ Հայ դատի Կենտրոնական խորհրդի հայտարարությունը ՀՀ վարչապետի հերթական անհիմն պնդումների վերաբերյալ

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման վերաբերյալ՝ ՀՀ այս իշխանությունների կողմից կառավարության գործունեության ծրագրին կատարված անընդհատական հղումներին, ապա պետք է նկատել, որ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրում նշված է. «Ցեղասպանության միջազգային ճանաչումը Կառավարությունը ծառայեցնելու է ոչ թե տարածաշրջանային լարվածության աճին, այլ ընդհակառակը՝ տարածաշրջանի լիցքաթափման նպատակին»: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս է հնարավոր Ցեղասպանության միջազգային ճանաչումը համադրել Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացմանը: Պետք է նաև ուշադրությամբ նկատել, որ ցեղասպանության միջազգային ճանաչումը կառավարության ծրագրում չի ներկայացվում իբրև գործընթաց, ինչը խոսում է ՀՀ արտաքին քաղաքական օրակարգից ճանաչման գործընթացը դուրս բերելու մասին:
Հայաստանի վարչապետը չի խորշել նաև խիստ վտանգավոր հայտարարություններ անել Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ:

Text Link

Հայ դատի

Visit our

ամփոփագիր,
հունվար 2022թ.

website

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

Coalition Backs Pallone-Bilirakis Campaign to Block Proposed U.S.-Turkey F-16s Deal

Greek, Armenian, Hindu, Kurdish, Christian, and Mid-East Groups Support Bipartisan Calls for Biden Administration to Reject Reckless Sale

A coalition of ethnic, faith-based, and civic groups representing Americans from across the nation are urging Members of Congress to cosign a bipartisan letter, led by Congressional Armenian Caucus Co-Chair Frank Pallone (D-NJ) and Hellenic American Caucus Co-Chair Gus Bilirakis (R-FL), calling on the Biden Administration to reject Turkish President Erdogan's request to purchase next-generation F-16 fighter jets and upgrade kits for their current fleet.

In a "Dear Colleague" letter encouraging fellow members of Congress to cosign the appeal to Secretary of State Antony Blinken and Secretary of Defense Lloyd Austin, Representatives Pallone and Bilirakis argue, "if approved, the sale of F-16s to Turkey will only incentivize President Erdogan to continue his destabilizing actions in the region and ignore his commitments under the North Atlantic Treaty Organization (NATO). Turkish and Turkish-backed forces have repeatedly taken aggressive, deadly actions against U.S. allies and partners in the Eastern Mediterranean, Middle East, South Caucasus, and North Africa for years – often utilizing American-made weaponry and components to carry out these incursions and commit war crimes in places like Syria, Iraq, and Nagorno-Karabakh."

Text Link

Հայ Դատը Կը Զօրակցի Թուրքիոյ F-16 Ռազմական Օդանաւեր Ծախելու Ծրագիրը Կասեցնելու Ջանքերուն

Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբը կը հաղորդէ, թէ կը համագործակցի յունական, քրտական, միջին արեւելեան, հնդկական եւ քրիստոնէական շարք մը կազմակերպութիւններու հետ, յաջողութեամբ պսակելու համար Թուրքիոյ F-16 ռազմական օդանաւեր ծախելու ծրագիրը կասեցնելու համար քոնկրեսական ջանքերուն։

Թուրքիոյ F-16 ռազմական օդանաւերու արդիականացուած տարբերակները ծախելու անպատասխանատու նախաձեռնութեան դէմ դնելու քոնկրեսական աշխատանքը կ՛առաջնորդուի Քոնկրեսի Հայկական համախմբումի համաատենապետ Ֆրենք Փալոնի եւ Յունական համախմբումի համաատենապետ Կասի Պիլիրաքիսի կողմէ։

Անգարա կ՛ուզէ նաեւ իր ունեցած F-16 օդանաւերը արդիականացնելու սարքեր գնել Ամերիկայէն։

Քոնկրեսականները այս նպատակով արտաքին գործոց նախարար Էնթընի Պլինքընին եւ

պաշտպանութեան նախարար Լոյտ Օսթընին յղած են նամակ մը, որուն մէջ կը շեշտուի, որ նման վաճառք մը աւելի անզսպելի պիտի դարձնէ շրջանը ապակայունացնող Անգարայի միջամտութիւնները, յիշեցնելով, որ Անգարա շարունակաբար կ՛արհամարհէ ՆԱԹՕի օրէնքները։ Իբրեւ օրինակ նշուած են Սուրիոյ, Իրաքի եւ Արցախի մէջ Թուրքիոյ ապօրինի գործողութիւնները։

Text Link

52 կոնգրեսական միացել է Հայ Դատի Ամերիկայի հանձնախմբի նախաձեռնությանը

ԱՄՆ-ի ավելի քան 52 կոնգրեսականից բաղկացած երկկուսակցական խումբը միացել է Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փալոնին և Գաս Բիլիրակիսին՝ ԱՄՆ Պետքարտուղարությունից և պաշտպանության նախարարությունից պահանջելով արգելափակելու չորրորդ սերնդի F-16 կործանիչների և արդիականացման սարքավորումների վաճառքը Թուրքիային: Այս մասին հայտնում է Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը:
Փետրվարի 4-ին պետքարտուղար Էնթոնի Բլինքենին և պաշտպանության նախարար Լլոյդ Օսթինին ուղղված նամակում ասվում է. «Մենք խստորեն կոչ ենք անում մերժել Թուրքիայի խնդրանքը՝ նոր F-16-երի և արդիականացման սարքավորումների վերաբերյալ, և անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ Էրդողանի վարչակարգին պատասխանատվության ենթարկելու համար: Միացյալ Նահանգները չպետք է հետագայում որևէ աջակցություն ցուցաբերի Թուրքիայի զինված ուժերին, քանի դեռ նախագահ Էրդողանը շոշափելի քայլեր չի ձեռնարկել՝ դադարեցնելու իր ապակայունացնող գործողությունները և միջազգային իրավունքի խախտումները երկրում և արտերկրում»:

Text Link

50+ U.S. Representatives Tell Biden Administration to Stop Sale of F-16s to Turkey

A bipartisan group of over 50 U.S. Representatives joined Congressional Armenian Caucus Co-Chair Frank Pallone (D-NJ) and Hellenic Caucus Co-Chair Gus Bilirakis (R-FL) in pressing the U.S. Departments of State and Defense to block the sale of next-generation U.S. F-16 fighter jets and upgrade kits to Turkey President Erdogan's increasingly hostile regime, reported the Armenian National Committee of America. "We strongly urge you to reject Turkey's request for new F-16s and modernization kits and take immediate action to hold the Erdogan regime accountable," states the February 4th Congressional letter addressed to Secretary of State Antony Blinken and Secretary of Defense Lloyd Austin. "The United States must not provide any further support to Turkey's military until President Erdogan takes tangible steps to halt his destabilizing actions and violations of international law at home and abroad. Precedent shows that he will not change his behavior until the United States uses all its diplomatic tools, including targeted economic sanctions."

Text Link

ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանի այցը Եվրամիության մայրաքաղաք

ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի Գրասենյակի և Բելգիայի ՀՀ դեսպանատան համատեղ ջանքերով տեղի ունեցավ է ՀՀ Մարդու Իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի եռօրյա աշխատանքային այցը Բրյուսել։ Այցի ընթացքում ՀՀ ՄԻՊ-ն ունեցավ մի շարք հանդիպումներ Եվրամիության և Բելգիայի Թագավորության գործադիր և օրենսդիր մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ՝ իրազեկելով Ադրբեջանի պատերազմական հանցագործությունների, ինչպես նաև 2020 թ-ի Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով Արցախում և ՀՀ սահմանամերձ շրջաններում ստեղծված բարդ հումանիտար իրավիճակի վերաբերյալ։

Հանդիպումների ընթացքում, ի թիվս այլ կարևոր հարցերի, ներկայացվեցին հանագամանալից փաստեր Ադրբեջանի հայատյաց քաղաքականության վերաբերյալ, որն արդեն տասնամյակներ շարունակ ակտիվորեն խրախուսվում է պետական ամենաբարձր մակարդակով և արմատացած է նաև կրթության, մշակույթի ոլորտներում։ Փաստարկվեց, որ պատերազմի ընթացքում Ադրբեջանի զինված ուժերի կատարած պատերազմական հանցագործությունները, ինչպես նաև հայ գերիների խոշտանգումներն ըստ էության ոչ թե առանձին երևույթներ են, այլ համակարգային, այլատյաց պետական քաղաքականության դրսևորումներ։

Text Link

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

Azerbaijan seeks to derail international, including Australian, position in support of the OSCE Minsk group for peace in Nagorno Karabakh

Azerbaijan's autocratic President Ilham Aliyev has now openly pledged to derail the activities of the OSCE Minsk Group, which is the UN Security Council endorsed vehicle supported by the international community—including Australia—to bring about a permanent settlement to the Nagorno Karabakh conflict.

Co-Chaired by representatives of Russia, the United States and France, the Minsk Group established in 1992 by the Organisation for Security and Co-operation in Europe (OSCE) remains the only format for the settlement of the Nagorno Karabakh conflict agreed by all sides of the conflict, including the Republic of Armenia, Republic of Artsakh and the Republic of Azerbaijan.

Until Azerbaijan's Turkish- and Jihadi-supported military aggression in 2020, which resulted in the ethnic cleansing and subsequent occupation of certain regions of the Armenian Republic of Artsakh, the OSCE Minsk Group co-chairs had conducted peaceful negotiations between the parties guided by the Helsinki Final Act's principles of the Non-Use of Force, Territorial Integrity, and the Equal Rights and Self-Determination of Peoples.

Text Link

Federal young liberal convention passes motion recognising the Republic of Artsakh and the Armenian,

Assyrian, Greek Genocides

The Young Liberal Movement of Australia has unanimously adopted a motion at its National Convention recognising the 1915 Armenian, Assyrian and Greek Genocides, as well as acknowledging the rights to self-determination of the indigenous Armenian people of the Republic of Artsakh, reported the Armenian National Committee of Australia (ANC-AU).

The Young Liberal Movement is the youth wing of the Liberal Party of Australia, which is one of two major political parties in Australian politics and currently the party in Government federally, led by Prime Minister Scott Morrison.

The adoption of the motion demonstrates the growing discourse in Australian society supporting national recognition of the 1915 Genocides, which contrasts with the policy of the Morrison Government, who have continued to placate the denialist Turkish Government with the use of euphemisms instead of the word “genocide” when referring to the Ottoman massacres against the Empire’s Christian minorities.

Significantly, the motion also ensures the Young Liberals support the rights to self-determination of the Republic of Artsakh, which is currently under occupation by Azerbaijan following their attacks on the independent Armenian-populated state in 2020 during the Nagorno Karabakh War.

Text Link

Federal and State Parliamentarians to join Armenian National Committee of Australia Annual Gala next Saturday

Australia’s Minister for Communications, Urban Infrastructure, Cities and the Arts, Hon. Paul Fletcher MP and Deputy Leader of the Opposition in the Senate, Senator Hon. Kristina Keneally will headline the list of Federal, State and Local Government dignitaries at the Armenian National Committee of Australia’s Annual Gala at the Museum of Contemporary Art in Sydney on Saturday 19th February 2022.

The postponed 2021 Gala of the Armenian-Australian community’s peak public affairs body will also feature guests including Federal parliamentarians Trent Zimmerman MP, John Alexander MP, Jason Falinski MP and Senator Deborah O’Neill.

They will be joined by New South Wales Ministers Hon. Damien Tudehope MLC, Hon. Mark Coure MP and Hon. Natalie Ward MLC and their state parliamentary counterparts, Legislative Assembly Speaker Hon. Jonathan O’Dea MP, Shadow Minister for Police Hon. Walt Secord MLC and Dr. Hugh McDermott MP.

Text Link

Հայ դատի Եգիպտոսի հանձնախումբ

«Հայերը նեղոսի ափերուն». Գահիրէի մէջ նոր հատոր՝ հայութեան մասին

Մօտ օրէն Գահիրէի միջազգային գրքի ցուցահանդէսին պիտի ներկայացուի հայերու մասին արաբերէնով նոր գիրք մը «Հայերը Նեղոսի ափերուն» խորագրեալ։

Այս մասին «Արեւելք» տեղեկացաւ Եգիպտոսի Հայ



Դատի յանձնախումբի դիմատետրի պաշտօնական էջէն։

Եգիպտացի ուսումնասիրող Մաժէտ Իզաթ Իսրայիլի հեղինակած եւ հինգ գլուխներէ բաղկացած գիրքը կ'անդրադառնայ հայերու ներկայութեան Եգիպտոսի Նեղոսի ափերուն, անոնց կեանքին, Եգիպտոսի հայ համայնքի արմատներուն, հայոց կոտորածներուն ու գաղթերուն, նաեւ հայերու քաղաքական- հասարակական կեանքին։

Հատորը նաեւ լոյսի տակ կ'առնէ թէ ինչպէս հայերը քաղաքական պաշտօններ վարած են յատկապէս Պատր Ալ Տին Ալ Ժամալիի օրօք, Եգիպտոսի մէջ օսմանեան տիրապետութեան ժամանակաշրջանին, Մուհամմէտ Ալի փաշայի օրերուն, ինչպէս նաեւ երկու համաշխարհային պատերազմներու տարիներէն մինչեւ օրս։

Հատորը կ'ընդգծէ հայերուն դերը եգիպտական շուկաներուն, ինչպէս նաեւ գիւղատնտեսութեան, անասնապահութեան, արհեստներու եւ արդիւնաբերութեան մէջ։ Նաեւ կը շօշափէ առեւտուրի եւ հայ վաճառականներու ու լումայափոխներուն առօրեան ու անոնց դերը եգիպտական շուկաներու վերակենդանացման մէջ։ Կ'անդրադառնայ նաեւ հայկական տնտեսական ծրագիրներուն։

Text Link

Հայ դատի Լիբանանի հանձնախումբ

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Ալիեւի Յայտարարութեան Վերաբերեալ Նամակ Մը Յղեց ԵԱՀԿ-ի Մինսքի Խմբակի Համանախագահող Երկիրներու Եւ ԵԱՀԿ-ի Նախագահող Երկրի Դեսպաններուն

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ նամակ մը յղեց ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրներ Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ եւ Ֆրանսայի եւ ԵԱՀԿ-ի նախագահող երկրի՝ Լեհաստանի դեսպաններուն՝ անդրադառնալով Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի վերջին յայտարարութեան, որուն մէջ ան մասնաւորաբար նշած էր, որ համանախագահները «պէտք է գիտնան, որ իրենք այլեւս պիտի չզբաղին Ղարաբաղի հարցով, որովհետեւ մենք ատիկա պիտի չարտօնենք»։

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը յայտնեց, որ «Քորոնա» ժահրի համաճարակի եւ բազմաթիւ պետութիւններու միջեւ լարուածութեան պատճառով Եւրոպայի ու ամբողջ աշխարհի համար ներկայ դժուար պայմաններուն մէջ, Ազրպէյճան կը շարունակէ սպառնալ միջազգային անվտանգութեան եւ շրջանային գոյակցութեան ու զարգացման՝ անպատիժ մնալով Հայաստանի եւ Արցախի խաղաղ բնակչութեան վրայ իր կատարած յարձակումին ու անոնց դէմ կատարած պատերազմական ոճիրներուն համար։

Text Link

Հայ դատի Իրանի հանձնախումբ

Հայ-թուրքական յարաբերութիւնների հարցը

համազգային թեմա է. Հայ դատի Թեհրանի հանձնախումբ

Վերջին շաբաթների ընթացքում հայկական եւ միջազգային քաղաքական հարթակներում ակտիւ քննարկման առարկայ է դարձել հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման օրակարգը:
Այդ ֆոնին, օրերս ուշագրաւ յայտարարութեամբ է հանդէս եկել Թուրքիայի նախագահի մամլոյ քարտուղարը՝ նշելով, որ այլեւս չկան Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման խոչընդոտող պատճառներ:
Նա հայ ժողովրդին փորձել է համոզել, որ Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորումն առաջինը բխում է հէնց «Հայաստանի եւ հայ ժողովրդի շահերից», իսկ յատուկ անդրադառնալով Սփիւռքին, սփիւռքահայութեանը կոչ է արել «կշռադատւած» վերաբերւել Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ երկխօսութեանը՝ նշելով յատկապէս. «չշահարկել 1915-ի «երեւակայածին ցեղասպանութեան» թեման»:

Text Link

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info